

ԳՐԻԿՈՐ-ՎԱՇՐԱՄ ՎԿԱՅԱՄԵՐԻ «ՏՕՆԱՄԱԿ» ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

Բանասիր. գիտ. դոկտոր Մ. Թ. ԱՎԻԱԼԻԲԵՆՅԱՆ,

Միջնադարյան Հայաստանում գործել են արարողական այնպիսի ժողովածուներ, որոնք եկեղեցու տոնակարգը պահպանելու հետ մեկտեղ ունեցել են մարդկանց գիտակցության ու զգացումների վրա ներգործելու, բարոյակրթելու հատկանիշներ, օժտված են եղել գրական-գեղարվեստական արժեքով և ներկայացնում են հայ գեղարվեստական գրականության որոշակի աստիճան: Այս առումով միջնադարյան այդ ժողովածուները («Շարակնոց», «Նկայաբիրք», «Յայսմաուրք», «Գանձարան», «Տօնապատճառ», «Քարող-դիրք») աչքի են ընկնում բանաստեղծության ու արձակի հարուստ պաշարներով: Հայ միջնադարյան գրականության որոշ երևույթներ անխուսափելիորեն կապված են այդ ժողովածուների հետ և դրանց հատկությունների ու վարճացման միտումների բացահայտումը հնարավոր կլինի ուրվագծել գրական որոշ տեսակների վարճացման ընթացքը, ուղիներն ու առանձնահատկությունները:

Արարողական անունը չպետք է ենթադրել տա սոսկ կրոնական-եկեղեցական բովանդակություն, այլ նաև ժողովրդի վրա ներգործելու մղումով ստեղծված գրականություն, այսինքն մի գրականություն, որը չի կարող անըրպեստված լինել ժողովրդական խավերի ավանդներից, նրա հոգեբանությունից ու դարավոր տենչանքներից: Չմոռանանք, որ արարողական կարգին նպաստող այդ ժողովածուները իրենց բովանդակությամբ ու նպատակներով շատ ավելի լայն ուղեծիր են ունեցել, քան սոսկ կրոնականն է, ուստի և նրանց ուսումնասիրությունը դառնում է անհրաժեշտ ոչ միայն գեղարվեստական գրականության պատմության տեսակետից, այլև հրատապ՝ ժամանակի անհրաժեշտ-քաղաքական, հասարակական հարցերի արժարժման ուսանելիություն:

Ամեն մի դարաշրջան իր հետ տանում է իր գաղափարական դինարանը՝ պատմականորեն անցողիկը, թողնելով սերունդներին դարաշրջանը ներկայացնող մնացորդ՝ ժամանակի ընդհանրացված, կերպավորված վերարտադրումը, մարդու միջոցով ընկալված միջավայրի գնահատականը՝ համամարդկայինն ու ազդայինը, համաժողովրդականն ու պատմականորեն առաջադիմականը: Ուսումնասիրողի խնդիրն է՝ ժամանակի բնորոշ եկեղեցական-կրոնական կեղևի մեջ բացահայտել և արժեքավորել այն միջուկը, որից նույնպես ծլարձակում է միջնադարյան գրականությունը, այս դեպքում նրա էությունից մեկը՝ գեղարվեստական արձակը:

«Յայսմաուրք» անվանումը բառացի նշանակում է «այսօր» կամ ավելի ճիշտ՝ «այս օրվա մեջ», «այս օրը» հիշատակվող տոների գիրք: Ժողովածուի հայկական անունը ծագել է հիմնական տոնի նշումից հետո նույն օրը հիշատակվող այլ տոների փաստագրումից: «Տօն է առաքելոյն Բարդուղիմէոսի», — նշում է ժողովածուն որոշակի օրվա համար, դրանից հետո ավելաց-

նեւով՝ «Ճայս աւուր՝ Սպիւռիդոնի»¹, այսինքն օրվա հիմնական տոնը Բարդուղիմեոսինն է, բայց տոնվում է նաև Սպյուռիդոն վկայինը: Մի այլ օրինակ՝ «Յայսմ աւուր յիշատակ է... Վարդիկ հօրն, որ ի Մեծ Հայք»² և այլն: Ահա այս կրկնվող «յայսմ աւուր» բառակապակցությունից էլ ծագել է ժողովածուի հայկական «Յայսմաւուրք» անունը:

Հայսմավուրքը սոսկական տոնացույց չէ, այլ նաև նյութերի հավաքածո, այնտեղ ի մի են բերված յուրաքանչյուր օր կատարվող տոնի մասին կարգալու նյութեր՝ «ընթերցուածներ»: Իր կազմությամբ Հայսմավուրքը մեր օրացույցների նախատիպն է, տարեսկզբի առաջին օրից մինչև վերջին օրը նշվում են տոներ, հոբելյանական տարեթվեր, իրադարձություններ՝ համապատասխան նյութերով: Միայն, հասկանալիորեն, Հայսմավուրքներում գերադանցորեն նշվում են եկեղեցական տոներ ու գործիչներ, որոնց մասին «ընթերցուածները» եկեղեցում բարձրաձայն կարդացվելիք նյութերը, չոր տվյալների ու տեղեկությունների բնույթ չեն կրում, այլ ղրուցապատում, կիսաբանահյուսական, առասպելական վիպումներ են, որոնք և ներկայացնում են միջնադարի գեղարվեստական միտքն ու ճաշակը: Հենց սրանով էլ նրանք դառնում են ուսումնասիրության առարկա՝ գրականագիտական տեսանկյունից: Բայց նախքան ժողովածուի պատմաբանական արժեքին անցնելը, անդրադառնանք նրա սկզբնավորման պատմությանը:

Հայ մատենագրության մեջ Հայսմավուրք ժողովածուների ծագումը ավանդորեն կապվում է Գրիգոր Վահրամ կամ Մեծ Վկայասեր կաթողիկոսի անվան հետ: Միջնադարյան արարողական ժողովածուների հետ նրա կապը հիշատակում են ոչ միայն հարցի ուսումնասիրողները³, այլև մատենագրական աղբյուրները, Գրիգոր Վկայասերի կենսագիրներն ու աշակերտները⁴: Մեծ հայագետներ Ալիշանը, Զամչյանը, Օրմանյանը կենսագիրների օրինակով շեշտը դնում են Գրիգոր Վահրամ կաթողիկոսի «Վկայասեր» մականվան վրա՝ այդ շափով դիտելով նրա մասնակցությունը նշված ժողովածուներին: «Եւ զի սա թարգմանեաց և կարգեաց զվկայաբանութիւնս սրբոց, փասն այսորիկ կոչեցաւ և Վկայասէր»,— գրում է Զամչյանը, միևնույնը կրկնելով իր մյուս աշխատություններում: «Գրիգոր Բ մեծ ջանքով փնտռեց և փնտռել տվավ սրբոց և մանավանդ մարտիրոսաց վարքեր, — նշում է Ալիշանը, — թարգմանեց կամ թարգմանել տվավ, այն պատճառով կոչվեցավ Վկայասեր»:

¹ Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 3653, էջ 102ա:

² Նույն տեղում, ձեռ. № 7361, էջ 107ա:

³ Ս. Զամչյան, Խրախճան պատմութեան հայոց, Վենետիկ, 1811, էջ 284: Նույնի՝ Պատմութիւն հայոց, հատ. Բ, Վենետիկ, 1785, էջ 1031: Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 351: Մ. Օրմանյան, Ազգապատում, Ադիրք, Բեյրութ, 1959, էջ 1274—1334 և այլն:

⁴ Ներսէս Շնորհալի, Բանք շափաւ, Վենետիկ, 1928, էջ 593: Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 2496, էջ 324ր. «Տաղ գերեզմանական վասն փոխման Երանեալ և սուրբ կաթողիկոսին հայոց Գրիգորի Վկայասերի», ձեռ. № 8775, էջ 301ա. «Գրուատ զովեստի... Մեծին Վարդանայ Արեւելոյ ի սուրբ հայրապետս մեր ի Վահրամ Գրիգորիս Վկայասէրն...», Մատենադարան, Փամանակագրութիւն, հրուսաղեմ, 1869, էջ 185, 229, 370—372 և այլն: Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, էջ 95:

Ալիշանը քիչ ավելի սերտ է դիտում նրա կապը արարողական դրական նության հետ. «Անոնց հանգստյան կամ նահատակության օրերուն համար դասավորված դիրքն ալ կոշվեցավ Տօնանամակ կամ համառոտյալ Տօնամակ». բայց բանիմացությունը դրդել է հիշեցնելու թե «իրմե առաջ ալ կար այսպիսի հավաքումն, բայց քիչ էին վկայաբանությունքը»: Վկայասերի Տօնամակի նոր բնույթի մասին նա ոչինչ չի ասում:

Անվանի հայագետների եղբակացություններն, անշուշտ, հիմնված էին ավելի վաղ մատենագրական աղբյուրների, ինչպես նաև չափածո ներբողյաններում պահպանված տվյալների վրա և ամենից առաջ՝ նրա տոհմի շառավիղ ներսես Շնորհալու:

Երկրորդ Մեսրոպ մեզ երևեալ
Զգիրս բազումըս թարգմանեալ.
Առ ի յունաց և յասորոց
Ճառքս սրբոց վերաբերեալ...

Զորս ոչ միայն լոկ վերծանեալ
Այլև վարուցըն նախանձեալ.
Պտ որում անուն իսկ ընկալեալ,
Վերկայսէր վերածայնեալ:

Այսպէ՛ք բաղմերախտ գործչի աշակերտ՝ Վարդան Հայկազունի «Տաղ գերեզմանական» մահախոսական ներբողյանի.

Նոր ճառերով ներբողիմաց
Բերկեալ գոգիսըն լըսողաց,
Պատուող ամէն սուրբ վկայաց
Քրիստոսունակ նահատակաց,
Նաւակատիս մարտիրոսաց
Յուրախութիւն ժողովրդաց...

Թարգմանութեանցն պարապլե
Գամէն ազդաց գիրքս քընէր,
Զորս պիտանի բանս ճանաչէր
Գայն ի լեզու մեր փոխարկէր
Մեզ դամենայնն ընդարձակէր
Եւ զորս պակաս լըցուցանէր...

Կիրակոս Գանձակեցին նրան անվանում է «ղայր իմաստուն և առաքինի ...Այս սքանչելի հայրապետն թարգմանեաց բազում ճառս վկայից աստուծոյ, և զճառս ներբողականս ի յունաց և յասորոց»:

Սակայն ձեռագրական սկզբնաղբյուրները չեն արդարացնում գովեստի չափը. Գրիգոր Վկայասերի թողած ժառանգությունը չի համապատասխանում համբավին, եթե հաշվի առնենք լոկ գրական վաստակը՝ հույն կամ ասորի աղբյուրներից քաղված վկայաբանական հուշարձանների թարգմանությունները. դավանաբանական հարցերին վերաբերող նրա կարևոր՝ «Վասն մոլորման ղատկին», «Կիրակէին», «Հավատով խոստովանեմք» մեկնողական ձառերը:

Զեռագրերում Վկայասերի անվամբ տարածում գտած ճառերի զգալի մասը, ինչպես պարզվեց քննադրի քննությամբ, պատկանում է ոչ թե Գրիգոր Վահրամ Վկայասերի գրչին, այլ ներսես Շնորհալու եղբայր՝ Փոքր Վկայասեր կաթողիկոսին: Սրանով ուղում ենք ընդգծած լինել այն գաղափարը, որ սոսկ անձնական հմայքն ու մեր ձեռքը հասած ոչ շատ հարուստ գրական ժառանգությունը հիմք չէին կարող ծառայել այն բարձր գնահատականի համար, որ տրվել է Գրիգոր Վահրամին հայ միջնադարյան աղբյուրներում:

Նոր Ահարոն խոյրիւ պըճնեալ,
Եւ Սամուէլ տէառն ընծայեալ,
Եկեղեցոյ վիմն եղեալ
Վերուստ կոյժամբ անօր ընտրեալ.
Որ և սոցունց համեմատեալ
Զեկեղեցիս լուսաւորեալ
Երկրորդ Մեսրոպ մեզ երևեալ...

Վկայասերի թողած թարգմանական ժառանգությունը և սակավաթիվ ճառ-ներբողյանները բավական չէին նրան կոչելու «Երկրորդ Մեսրոպ», «վէմ հաւատոյ», «վերուստ անօթ ընտրեալ» և այլն: Նշանակում է, որ Վկայասերը, բացի վերոհիշյալներից, նաև այնպիսի գործ է կատարել, որն անհամեմատ ավելի ծանրակշիռ է եղել: Ժամանակակիցներին այդ նորույթը ցնցել է, իսկ հաջորդներին հասել է արձագանքներով միայն: Նրա սկսած գործը դարից-դար անցնելով կապվել է նորանոր անունների հետ՝ առավել մշուշելով ձև-նարկողի ու հիմնադրի ավանդը միջնադարյան այդ ուշագրավ ժողովածուների ստեղծման պատմության մեջ:

Մեր ուսումնասիրության կարևոր խնդիրներից մեկն է ցրել այդ կուտակված մշուշը և ներկայացնել Գրիգոր Վահրամ Վկայասերի ավանդը Հայսմափուրք ժողովածուների ձևավորման խնդրում:

Զիստելով բազմաթիվ այլ ժողովածուների գոյությունը մինչ Վկայասեր Վահրամ-Գրիգոր կաթողիկոսը, չժխտելով IX—X դդ. հունական Հայսմափուրք ժողովածուի գոյությունն ու նրա թարգմանությունը (Հովսեփ Կոստանդնուպոլսեցու կողմից) հայ իրականության մեջ, մենք ձեռագրական-փաստական և մատենագիտական տվյալների հիման վրա դիտում ենք հայկական Հայսմափուրք ժողովածուների ստեղծման սեփական ուղի, հայ իրականության մեջ արդեն գոյություն ունեցող արարողական մեկ այլ ժողովածուի օգտագործման, խմբագրման, վերակերտման, վերստեղծման հանապարհով: Դա ոչ հունականի ստրկական ընդօրինակումն է, և ոչ էլ դարաշրջանի սկզբունքները խաթարող արկածախնդրական փորձարկություն, այլ համաշխարհային քրիստոնեական և ազգային հայ եկեղեցական ժառանգություն հմուտ գործադրություն:

Այդպիսի դրժը գլուխ կարող էր գալ առանձնահատուկ բանիմաց ու օժտված, պատմա-քաղաքական իրադրություններում կողմնորոշվող, իրավա-դիվանագիտական հոտառություն ու հեղինակություն վայելող, ազդային ավանդների պահպանության դիրքերում կանգնած այնպիսի մի բարձրակիր՝ անձնավորության ջանքերով, ինչպիսին էր մեծատոհմիկ Գրիգոր Վահրամ Վկայասեր կաթողիկոսը XI դարում: Երբ ուսումնասիրում ենք նրան վերաբերող մատենագրական, կենսագրական, ներբողական, նաև հիշատակարանային տվյալները, ապա մի բան ակնհայտ է դառնում: Գրիգոր Վկայասեր կաթողիկոսը մեծ աշխատանք է ձեռնարկել Ճաշոց ժողովածուների բարեփոխման ասպարեկում, որոնցից և ծայր են առնում արարողական նոր երևույթներ, նոր մտահղացումներ, համաքրիստոնեական արարողական ժողովածուներին ներգաշնակ տեղային դրսևորումներ, ժամանակի համաշխարհային մշակույթի սեփական անդրադարձումներ, որոնք հարապատ ժողովրդի ազգային ինքնություն դիմագծի պահպանմանն էին սատարելու: Իմ քանի որ մեզ հետաքրքրող Հայսմափուրք ժողովածուների սկզբնավորման ծայրը թաքնված է այստեղ, ապա անհրաժեշտաբար անդրադառնում ենք Ճաշոց, որ է Տարեգիրք կամ Տոնամակ ժողովածուներին՝ նրանց կազմությանն ու հայ իրականության մեջ կրած փոփոխություններին:

Նախ անդրադառնանք ժողովածուի անվանը՝ «Ճաշոց» գրքին: Դիմենք բառարաններից ամենահեղինակավորներից մեկին՝ Հայկազնեան բառարանին. «Տօնամակ, — կարդում ենք այնտեղ, — տօնից ամին կարգ և ցուցակ»:

ընթերցուածովք, այն են ճաշոյց ամի ամի տօնից տարեկանաց, որ առ յն-տինս ճաշոց գիրք ասի», ուրեմն, այստեղ նույնացված են ճաշոցն ու Տո-նամակը. ի հաստատումն այս բացատրության, իբրև օրինակ բերվում է հենց Գրիգոր Վկայասերի և նրա աշակերտ Կյուրակոսի հիշատակարանը Տոնամակի վրա աշխատելու մասին, քաղված հին ճաշոցից. Այնուհետև. «Ճաշոյ ժամ» բառի տակ՝ «Ժամանակ ճաշելոյ, որպէս երրորդ և վեցերորդ ժամ տուրնջեան, ուստի և ժամերգութիւն, որ յայնմ պահու՝ զնոյն անուն կրէ, որպէս և գիրքն ընթերցուածոց պատարագի, որ առ նախնեօք Տոնամակ կոչէր, առ մեօք նաշոց ասի»:

Իսկ ի՞նչ էր իրենից ներկայացնում ճաշոց ժողովածուն: Դա միջնա-դարյան մյուս ժողովածուների նման ուներ իր տարատեսակները, որոնց բա-լորի համար, սակայն, բնորոշը ժողովածուի տոնակարգի շարժական բնույթն էր, այլ շաբաթ-ների ու նրանց օրերի կարգով: Եվ որովհետև շաբաթվա օրերը ամեն տառի նույն օրերին չեն ընկնում, ուստի և տոների ամսաթվերը փոփոխվում էին, տոները «շարժվում» էին: Տոնակարգի շարժական բնույթը հնագույն բոլոր ժողովածուների առանձնահատկությունն էր վաղ միջնադարում: Ամսաթվա-յին տոները ավելի ուշ երևույթ են և կապվում են տոմարի կայունացման հետ:

Որ Գրիգոր Վկայասերն աշխատել է ճաշոց ժողովածուների վրա, այդ նախ է՝ առաջ անվերապահ հաստատվում է Վկայասերի հիշատակարանով, որ պահպանվել է հենց ճաշոցում: Այդ է վկայում բնորդ ժողովածուի «Տո-նամակ» անվանումը թե՛ Վկայասերի, թե՛ նրա աշակերտ Կյուրակոսի կող-մից. «Յաւելի ի նախակարգեալ տօնս... րնտրեալ ի Տօնամակաց»⁵, — գրում է Վկայասերը: Իսկ Տոնամակը, ինչպես տեսանք, նույնանիշ է հետագա ճաշոց անվանումին. «Ծանուցանեմ ձեզ վասն սուրբ կտակիս՝ Տօնամակի»⁶ երկ-րորդում է Կյուրակոսը:

Ժողովածուի անվանումից բացի Կյուրակոսի հիշատակարանում բացա-հայտվում է բարենորոգվող ժողովածուի էական հատկանիշն ու բնույթը. «Ապա հոգին սուրբ աղգեաց սուրբ հայրապետին Գրիգորիսի... և նոր սկսեալ յօրինեաց զսա՝ ըստ ամենայն տօնից արժանապէս՝ ի դէպ սաղմոսիւք և ըն-թերցուածովք»⁷: Այս արդեն անառարկելի է դարձնում Գրիգորի աշխատանքը ճաշոց ժողովածուների բարենորոգման ուղղությամբ, քանի որ ուրիշ որևէ միջնադարյան-արարողական ժողովածու չունի «ընթերցուածների» այս կա-նոնը կամ սիստեմը:

Մնում է որոշակի դարձնել կատարած նորամուծությունները: Բարե-նորոգումներից առաջինը նշել է ինքը Գրիգորը. ի տարբերություն ճաշոց-ների տերունական տօների շարժական կարգին, Գրիգորը մտցրել է կայուն տոների սիստեմ՝ «Շուրջամբ աւուրց հոռոմի ամսոց». սա ճաշոցից Հայս-մավուրք տանող ճանապարհի առաջին և կարևոր քայլն է. սահմանել տոմա-րական-ամսաթվային տոնակարգ ի տարբերություն ճաշոցների շարժական բնույթի:

⁵ Ա լ ի շ ա ն, նշվ. աշխ., էջ 351, Բ. Ս ա ռ գ ի ս յ ա ն, Յուցակ ձեռագրաց, Բ, Վենետիկ, 1924, էջ 1208—1210, Գ. Հ ո վ ս ե փ յ ա ն, Յիշատակարանք, Ա, Անթիլիաս, 1951, էջ 363—364, 279—280:

⁶ Նույն տեղում:

⁷ Նույն տեղում:

Դժվար է հաստատապես պնդել, թե դա անպայմանորեն օտար Հայս-մավուրքների սիստեմից էր գալիս: Չմոռանանք, որ Վկայասերը ժամանակակիցն էր Հովհաննես Սարկավագի⁸, նրան մտերիմ մի անձնավորություն՝ գրական կապերով առնչված, որի գործերին չէր կարող անտեղյակ լինել րակերը:

Այսպես ուրեմն. նախ՝ կայուն տոնակարգ:

Երկրորդ՝ հայկական ամիսների և հոռմեականի տարբերությունները նույնպես ծնում էին մեծ շփոթմունք. դրա համար Վկայասերը և նրա օրինակով՝ անցման շրջանի ճաշոցները, տոնակարգը տալիս են հայոց և հռոմայեցոց ամիսների համատեղությամբ. «նաւասարդի մի, որ է աւգոստոս յ 4, տօն է...»⁹:

Երրորդ. ի տարբերություն հնագույն ճաշոցների, որտեղ բացառված էին սրբերի տոների հիշատակությունները, Վկայասերը մտցնում է նահատակների տոներ իրենց «ընթերցութենով»։ «Զոր ես՝ Գրիգոր ծառայ աստուծոյ վասն սիրո վկայից Քրիստոսի յաւելի ի նախակարգեալ տօնսն հռոմի ամսոց, ընտրեալ ի Տօնամակաց...»: Միևնույնը շեշտում է նաև Կյուրակոսը. «Զի ըստ հաւատոց մերոց և տօնք սրբոցն պարտ է, որ կատարին»:

Չորրորդ. Վկայասերը սաղմոսների և ընթերցվածների նոր բնագրեր է կազմում՝ նոր տոների համապատասխան, մի դժվարին գործ, որ ինչպես երևում է Կյուրակոսի հիշատակարանից, այդպես էլ անավարտ է մնում. «Բայց ոչ ի գլուխ աւարտեաց դամենալն,— գրում է Կյուրակոսը հիշատակարանում,— դոր պարտ և արժան էր տօնելոյ»: Բայց սրանից հետո նա մանրամասնում է ասելիքը և հիշատակարանը օժտում առավել պիտանի և ուշագրավ տվյալներով՝ Գրիգորի և իր արածի փաստական նկարագրությամբ. «Ապա ինձ,— շարունակում է նա,— որ միշտ ընդ նմա էի... հոգ եղ ի վախճանելն իւրում՝ մի անփութ լինել զսմանէ, այլ յանկել ընթերցութեամբ ըստ արժանին, զոր և արարի», այսինքն՝ Վկայասերը իր մահվան ժամին հորդորում է թերի չթողնել իր գործը, այլ լրացնել ընթերցվածներով, որ և կատարում է Կյուրակոսը: Եվ այսպես. «Բառասուն և վեց տօն սուրբ հայրապետն կարգեաց և երեսուն՝ եւ տրուպս յաւելի, որ լինին եւթանասուն և վեց, զորս բոլոր տարւոյն բաւական համարեցաք ընթերցութեամբն և մարտիրոհօգոքն»,— պարզ ու հստակ հիշատակագիրը ներկայացնում է իրենց արածը: Ինչտեղ չի խոսվում ծալրեծայր նոր ժողովածու կազմած լինելու մասին, այլ ճաշոցի մեջ 76 նոր տոն սահմանելու և դրանք համապատասխան ընթերցվածներով և, մարտիրոհօգոքն, այսինքն նահատակների մասին գրույց-պատմություններ ներմուծելով, որ հետագա Հայսմավուրք ժողովածուների էությունն է կազմում, որով և անառարկելի է դառնում Վկայասերի մեծ ավանդն այդ գործում:

Գրիգոր Վկայասերի և նրա աշակերտ Կյուրակոսի այս հիշատակարանը մղել է մասնագետներին եղրակացնելու, որ նա ինչ-որ գործ է կատարել այդ

8 Տե՛ս Ա. Արա հ ա մ յ ա ն, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, Երևան, 1956, էջ 27—28:

9 Տե՛ս Մաշտոցի անվ. Մատենադարան, ձև. № 832, 3266, 940, 2948 և այլն:

բնադավառում¹⁰, բայց նրանց պակասել է ձեռագրական փաստական հիմնավորումը:

Մինչդեռ մատենադրական աղբյուրներից անցնելով ձեռագրական-փաստական նյութին՝ մեզ հաջողվեց մինչվկայասերյան ճաշոցների կողքին դիտելու այնպիսի ժողովածուներ, որոնք ճաշոց անունն են կրում, բայց էապես տարբեր են ճաշոցներից, պարունակում են եկեղեցու հայրերի կամ նահատակների ամսաթվային տոնի հիշատակներ, որոնք ըստ բնույթի ճաշոց չեն արդեն և ոչ էլ Հայսմավուրք դեռևս:

Մեր ուշադրությունը գրավեց հատկապես Մաշտոցի անվ. Մատենագետյանի № 832 ճաշոցը՝ հնագույնը մեր ձեռագրերում՝ գրված 1154 թ., վկայասերի մահից հիսուն տարի չանցած, հավանականորեն Սկեռայում: Այս ճաշոցն ուշագրավ է մի քանի առումով: Նախ՝ ամսակարգով: Եթե ճաշոցներն ընդհանրապես սկսվում են Ավետման և Ծննդյան տոներով՝ դեկտեմբերի վերջ և հունվարի սկիզբ, ապա այս ճաշոցն սկսվում է հայկական տոմարակարգով՝ նավասարդի 1-ով: Ուրեմն տերունական տոների կարգը խախտված է և ճաշոց է ներթափանցել տոմարական օրացույցը:

Բայց № 832 ձեռագրում տոներն ամենօրյա չեն. ամբողջ նավասարդ ամսին (օգոստոսի 11—սեպտեմբերի 10) նշված է ընդամենը 5 տոն:

Այսպես սակավաթիվ են նաև մյուս ամիսների տոները՝ Հոռի ամսին (սեպտեմբեր—հոկտեմբեր) նույնպես հինգ տոն և այլն:

Ինչպես հայտնի է, հայ եկեղեցում նշվող տոները շատ դեպքում ոչ թե կրոնական բովանդակություն ունեն, այլ ավելի վերաբերում էին հայ ժողովրդի պատմական ճակատագրին ու մշակութային կյանքի իրադարձություններին, ինչպես օրինակ՝ հայ տառերի գյուտին, Վարդանանց ազատագրական պայքարին, շատ գործիչների կենսագրականներին. բազմաթիվ տվյալներ էին պարունակում ինչպես հայերի, այնպես էլ ուրիշ երկրների ու ժողովուրդների պատմական, սոցիալական, կենցաղային, ազգագրական նրբությունների շուրջ:

Մեր նկարագրած մինչվկայասերյան ճաշոցներից այս ձեռագիրը տարբերվում է երկու հիմնական հատկանիշով. առաջին՝ նշվում են կայուն, ամսաթվային տոներ, թեև ոչ ամենօրյա, և երկրորդ՝ տոները գերակշիռ մասով հայկական են, հալ գործիչների հիշատակների օրեր: Բայց ուշագրավն այս ժողովածուում այն է, որ տոնի առթիվ եղած ընթերցվածները, կարդացվելիք նյութը հին, ճաշոցային է՝ հատվածներ գերազանցապես Գործք առաքելոցից: Ուրեմն ընթերցվածների կարգը նույնությամբ մնացել է մինչվկայասերյան ճաշոցներինը, իսկ տարվա համար սահմանվել են թեև ոչ ամենօրյա, բայց կայուն օրացույցային տոներ, մի քանի տերունական տոների հետ մեկտեղ հայկական հիշատակների տոներ:

Երբ քննում ենք նշված № 832 ձեռագիրը տոների քանակի, բնույթի, ընթերցվածների սիստեմի առումով, ապա ակնհայտորեն կանգնում ենք հետևյալ ուշագրավ փաստերի հանդեպ. նախ՝ № 832 ձեռագրի առաջին մասում՝ նավասարդից մինչև հրոտից ամսվա վերջն ընկած տոների թիվը հասնում է 46-ի: Այդ համապատասխանում է Կյուրակոսի հիշատակարանի

¹⁰ Տե՛ս Ա ի շ ա ն, նշվ. աշխ., նաև՝ Ն. Ա դ ո ն ց, Նամակներ, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1975, № 11, էջ 84:

տվյալներին՝ «Քառասուն վեց տօն սուրբ հայրապետն կարգեաց և երեսուն՝ ևս՝ տրուպս յաւելի»։ Զեռագրի երկրորդ հատվածում, որտեղ տոները նշված են հռոմեական ամիսների կարգով, մենք Կյուրակոսի նշած 30 տոնի դիմաց հաշվեցինք ուղիղ 30 տոն։ Պատահակա՞ն է արդյոք այս ձեռագրի երկու հատվածների տոների քանակի (46 և 30) համապատասխանությունը Կյուրակոսի նշածի հետ՝ «որ լինին Լւթանասուն և վեց, զորս բոլոր տարւոյն բաւական համարեցաք...»։

Երկրորդ՝ այս ձեռագրում դեռևս ճաշոցային է մնացել ընթերցվածների համակարգը։ Մնացածը փոխվել է. այն ներառել է ամսաթվեր, օտար ժողովածուներից տարբերվող հայկական ամսակարգ ու տոնացանկ։ Տոների ճշգրիտ բաշխումն ու, մանավանդ, նոր տոները ճաշոցային ընթերցվածներով օժտելու այդ հատկանիշը № 832 ձեռագրում կասկածի տեղ չի թողնում, որ սա հենց այն ճաշոց-ժողովածուներից է, որ իր վրա է կրում Գրիգոր Վկայասերի բարեփոխությունների կնիքը։ Մինչև Հայսմավուրք մնացել է մեկ էական փոփոխություն՝ ընթերցվածները փոխարինել տոնի առթիվ վկայաբանությունների կամ վարքերի սյուժետային պատմություններով, որոնք դարձյալ պետք է ընթերցվեին եկեղեցում, Գործք առաքելոցի ու Լկվետաչանների հատվածների փոխարեն։ Ուրեմն պետք է փոխվեր ընթերցվելիք նյութի նաև բովանդակությունը, ներառնելով վարքեր ու վկայաբանություններ, որոնք այնքան բնորոշ էին օտար՝ հույն, բյուզանդական Հայսմավուրքներին։ Սակայն № 832 ձեռագիրը նահատակների տոների սահմանման հետ մեկտեղ՝ չունի սրանց հայսմավուրքային ընթերցվածները։

Արդ, վկայաբանական պատմությունների պակասը № 832 ճաշոցում նշանակո՞ւմ է արդյոք, թե նշված ժողովածուն Վկայասերի ձեռքի գործը չէ, թեև դարմանալի համընկնումներ կան նրա բովանդակության և Վկայասերի ու Կյուրակոսի հիշատակարանների նկարագրածում։ Զե՞ որ Կյուրակոսն ասում է որոշակիորեն, թե Վկայասերը Տոնամակը լրացրեց «ընթերցուածովք և մարտիրոգոգոքն»։ Լկվելին. այդ մասին հիշատակում է ինքը՝ Գրիգոր Վկայասերը. «Ես Գրիգորիս ծառայ աստուծոյ և դիտապէտ Հայաստան ազգիս համարձակեալ վասն սիրոյ վկայից... որ ի բաղմաց անփոյթ էր լեալ... և մեք աշխատեալ զայսպիսի համոռօտահաւաք Տօնամակս գրեցաք. զոր մի ոք աւելորդ վարկցի՝ զորոց զվարս քաղաքավարական պատմութեանց, զոր ոչ զոյր առ մեզ հալ զբով մեք աշխատութեամբ թարգմանեալ ի յունականէն ի մերս դիր և բառ...»։ Ուրեմն նա նշում է նահատակների պատմությունները, որ թարգմանել է, և որ «առանց երկուանալոյ պիտի կատարել զկանոն ընթերցուածիս ի տօնս յիշատակի սրբոցն», իսկ այս նշանակում է, թե նա ճաշոցային ընթերցվածներից դատ նաև վկայաբանություններ է թարգմանել, որոնք պետք է ընթերցվեին հիշատակի օրը։

Եվ ոչ միայն թարգմանություններ։ Վկայասերը մտահոգվել է հայ ազգային գործիչների հիշատակը հավերժացնելու հարցով. «Մեր ուղղադաւան ազգիս արամեան... համօրէն ամենայն սրբովք, որ Եղեմն յազգս մեզ հաճոյ աստուծոյ զայս գրոյ անփոյթ արարին վասն ժամանակին... և մեծ և աստուածային տօնքն... վկայիցն և սուրբ հայրապետացն, հարցն... և կուսանացն անփառաւոր և անկատար և անյարմար լինել առանց այս գրոց...», որից հետո է միայն Կյուրակոս աշակերտը, ի մի բերելով Վկայասերի և իր արածները, ասում, թե ընդամենը 76 տոն սահմանեցին՝ «զորս բոլոր տար-

ւոյն բաւական համարեցաք ընթերցուածովքն և մարտիրոջօքն: Թերևս կասկածանքի տեղիք տար այս խնդիրը, եթե մեղ օգնության շնորհիւ դարձ-
յալ ձեռագրերը և ն. Ակինյանի մի դիտումը. «Ժամանակի ընթացքին,—
դրում է Ն. Ակինյանը,— կցված էին Տօնամակին, ուրոյն բաժնի մեջ, նո-
րամօտ տերունական տոներ, սուրբերու և մարտիրոսներու քիշատակներ,
մասամբ ըստ հայոց և մասամբ ըստ Հռոմի ամսոց»¹¹:

Ուրեմն Տօնամակն ուներ իր բաղադրիչ հավելվածը՝ «ուրոյն բաժինը»:
Ինթադրություն է այս, թե՛ ձեռագրական փաստ: Զգիտենք Ակինյանն ինչ
կովաններ է ունեցել, բայց ձեռագրաց ցուցակներում մեղ հանդիպեց հե-
տևյալ ուշագրավ հիշատակարանը Ճաշոցում¹², թե ժողովածուն ցույց է
տալիս «զբանիութիւն ամսոյ (այսինքն՝ որոշակի ամսաթիվ—Մ. Ա.) և զա-
ւուրն ընթերցուածն և զսաղմոսն յանդիման կացուցանէ» և որ ավելի կարե-
վորն է՝ «գտօնիցն առանձին և զյիշատակաց», որ նշանակում է ինքնին, թե
հիշատակի ընթերցվածներն առանձին գոյութիւն են ունեցել. և եթե միևնույն
տոների համար տարբեր ընթերցվածներ են կազմվել, ընթերցողները թող
շտարակուսեն. «Բայց եթէ կրկին և երեքկին և բազում անգամ զնոյն կար-
գեցաք ի գիրս, արդ մի ոք տգիտութեամբ համարեսցի գործս այլ առա-
ւելեալ փութով, զի առանց աշխատութեան կարգի յանցն իւր տեղւոջն յան-
դիմանակաց ժողովոյն խնդրողն գտանիցէ զընթերցումն»¹³: Մենք այնպես
ենք հասկանում, թե խոսքն այստեղ Ճաշոցի ընթերցվածների տարբեր սիւ-
տեմին է վերաբերում՝ տոնի հիշատակների առթիվ սաղմոս կցուրդների
կողմին ճակն ճանաչողութեամբ սյուսեմտային պատմութիւն-ընթերցվա-
նելին, որոնք թեև տարբեր ժողովածուներով, բայց նախատեսվում էին տոնի
օրը կարգալու համար: Այս նորարարութիւնը օրինականացնելու պահանջով
պետք է բացատրվեն Ճաշոցի հիշատակարանի այն տողերը, որտեղ վկայա-
սերն իբրև կաթողիկոս հրահանգ է տալիս իր հիշատակարանն արտագրելու
«հարկ և հրաման ունիք յաստոածոյ զսակաւ յիշատակարանս խրատու ի
գիրսն, զոր նորոգեցեք՝ յօրինակել, որպէս և զհոգևոր տեառն յիշատակ»
որպեսզի այս նորամուծութիւնները տարակուսանքի տեղիք չտան և ընկալ-
վեն իբրև եկեղեցու հոր կարգադրութիւններ:

Ճաշոց և սրան հարակից՝ Մարտիրոսի ժողովածուների գոյութեան մեր
բերած օրինակը, ինչպես երևում է ձեռագրերի քննութիւնից, եղակի փաստ-
էլ մեր մատենագրական կյանքում: Ահա Մաշտոցի անվ. Մատենադարանի
№ 142 թերի Ճաշոցը՝ «Մասն Ճաշոցի»: Գրման ժամանակը՝ 1269 թ., վայրը՝
Հոռոմ. գրիչ Մարգարեի գործակիցների մեջ նշված է նաև Վարդան Արեւելցին:
Տիպիկ հնագույն Ճաշոց. «Զորեքշաբթի առաւօտն...», «Շաբաթ առաւօտն...»,
«նոր Կիւրակէի առաւօտն...» և այլն, առանց ամսաթվերի: 310բ էջում
կարդում ենք. «Շօղակաթին (տոնը—Մ. Ա.) շաբաթ օրն. կարգն ի Մար-
տիրոսիցն է, գիտ և կարդա... Սուրբ Խաչին յընթերցուած է սեպտեմբեր ժգ,
գիտ և կարդա... Կցուրդ՝ նշանեցա. կարգն ի Մարտիրոսիցն է»: Սրանք

¹¹ Ն. Ակինյան, Մատենագրական հետազոտութիւններ, հատ. Ե, Վիեննա, 1953, էջ 291—292:

¹² Մաշտոցի անվ. Մատենադարանի անտիպ ձեռագրերի հավաքածո, Մեսրոպ: Տեր-Մովսիսյան. «Ճաշոց», փաստ. 3:

¹³ Նույն տեղում:

սլարզ վկայություններ են այն բանի, որ ճաշոցների կողքին գործել են նաև Մարտիրոսոգ վկայաբանական ընթերցվածների ժողովածուները, որոնք, ըստ մեր ձեռքի տակ եղած աղբյուրների, ակունք են առել № 832 տիպի ճաշոցի և զուգահեռ ժողովածուների գոյությունից:

Այս առումով մեր ուշադրությունը գրավեց դարձյալ Մաշտոցի անվ. Մատենադարանի № 8179 ձեռագիրը՝ ճառընտիր, գրված 1279 թ.: Վերջինս դարձանալի ներդաշնակություն ունի վերոհիշյալ № 832 ճաշոցի հետ, միայն թե ճառընտրի մեջ առանձնացված չեն հայկական ամսանուններով տոներն ու հոռմեական տոնացույցով տերունական տոնակարգը, այլ միաձուլվ են, համատեղ ներհյուսված, այսինքն՝ նավասարդ ամսից հերթականորեն նշվում են բոլոր տոները ամսարվերի դասավորությամբ, չեն առանձնացված, ինչպես ճաշոցում: Ինչ-որ մի ձևով միասնական սիստեմի է բերել տարբեր աղյուսակներում եղած թե՛ հայկական, թե՛ ընդհանուր քրիստոնեական տոները և դասավորել հայկական ամսակարգով. սկսել է նավասարդից, ամսվա մեջ տեղադրելով հայ եկեղեցում կատարվելիք թե՛ հայկական, թե՛ տերունական տոների բուն զույգները: Ի տարբերություն № 832 ձեռագրի ճաշոցային ընթերցվածների, № 8179 ձեռագիրն, ահա, ամփոփում է պատմական նահատակություններ, իսկ տերունական տոների շուրջ էլ՝ սյուժետային պատումներ: Սա արդեն ճաշոցից դեպի Հայսմավուրք ընթացող ուղու հաջորդ աստիճանն է, որ դեռ լրիվ օրացուցային տոներով հագեցված չէ, բայց պարունակում է արդեն հայկական իրականության մեջ կատարվելիք տոների ոչ միայն կարգը, այլև բուն ընթերցվելիք նյութը՝ վկայաբանությունն ու տոնի պատճառը:

Բացի նրանից, որ № 8179 ճառընտիրում տոնակարգը լրիվ համապատասխանում է № 832 ճաշոցի տոնակարգին, որ ինքնին շատ բան է ասում սրանց ընդհանրության մասին, № 8179 ճառընտիրում պահպանված են, մեր կարծիքով ոչ պատահականորեն, Գրիգոր Վկայասերի երկու ճառերը. առաջինը՝ Եփրեմ Խորին Ասորու՝ Հովհաննես Մկրտչի տօնին նվիրված գեղեցիկ, գեղարվեստական բարձրարժեք ճառն է, որ թարգմանել է ինքը Վկայասերը և հավանորեն ինքն էլ տեղագրել իր ճաշոցին կից վկայաբանական ժողովածուում՝ «Հրավիրելով կոչեցաւ լեզու իմ...» սկսվածքով, երկրորդը՝ դարձյալ Վկայասերի՝ «Յաղագս աշխարհայմատրանն, որ հոռի առաջին կիրակին կատարի» ճառն է:

Ուշագրավ է այն պարագան, որ աշխարհամատրան տոնը ոչ մի եկեղեցի չի կատարել, ոմանք էլ այդ կապում են մարտ ամսվա կամ մարտիրոսաց տոների հետ, որ ճառի հեղինակը ժխտում է, և միայն № 832 ճաշոցն է, նշում այդ տոնը հոռի (որ է սեպտեմբեր ամսին) առաջին կիրակին, իսկ № 8179 ճառընտիրն էլ դրան բացատրություն է տալիս՝ «Յաղագս տօնի աշխարհայմատրանն, որ Հոռի առաջին կիրակին կատարի» ճառով. այդ աներկբայորեն վկայում է նշված երկու ժողովածուների միասնական սկզբունքով ստեղծված լինելու հանգամանքը և հավանական դարձնում Տոնամակ ճաշոցի ու նրան հարակից կամ բաղադրիչ Մարտիրոսոգ ժողովածուի գոյությունը հենց Վկայասերի ժամանակներից սկսած:

Պնդել, թե № 8179 ճառընտիրը իր վկայաբանական նյութերով անվերապահ ու անմիջականորեն Վկայասերի ու Կյուրակոսի ձեռքի դործն է,

չենք կարող¹⁴, բայց և չենք կարող ժխտել, թե այս ժողովածուն վկայասեր-
յան նախաձեռնության արդասիք է, որ հետևողական կիրառություն է ստացել
ոչ միայն նշված Ճառընտիրում, այլև ետվկայասերյան Ճաշոց ժողովածուների
հետագա ճակատագրում:

Վկայասերից սկսվող այս միջամտությունը Ճաշոց ժողովածու լայն
դուռ է բացում հետագա բաղմապիսի նորամուծությունների համար, որոնք
էապես խաթարում են Ճաշոցի բնույթը և պատճառ դառնում հետագարձ
պրոցեսի:

Երբ արդեն ավարտուն ձև են ստանում Հայսմավուրքներն իբրև ինքնու-
րույն ժողովածուներ, անհրաժեշտություն է ստեղծվում մաքրելու Ճաշոցը
ետսամույն տարրերից, որի հետևանքով և մինչև այսօր զուգահեռ գործում է
թե՛ Հայսմավուրքն իր օրացուցային լրիվ կարգով ու սյուժետային ընթերց-
վածներով, թե՛ Ճաշոց ժողովածուն, տերունական տոների շարժական-շա-
բաթական կարգով ու ընթերցվածների հին սիստեմով՝ «Գործք առաքելոցից»
քաղվածքներով, սաղմոսով, կցուրդներով ու շարականներով:

Այսպիսով, հայ ձեռագրական փաստերի, սկզբնապես № 832 Ճաշոցի,
Գրիգոր Վկայասերի ու Կյուրակոս աշակերտի հիշատակարանների համա-
դրությամբ պարզվում է հայկական Հայսմավուրքների ծագման պատմու-
թյունը Ճաշոց ժողովածուների հիմքի վրա, որ հետագա գործիչների՝ Տեր-
հսրայիլի, Կիրակոս Արևելցու ջանքերի շնորհիվ ներդաշնակվում է Հովսեփ
Կոստանդնուպոլսեցու թարգմանած հունական Հայսմավուրքին և աստիճանա-
կան հարստացմամբ հասնում համաքրիստոնեական գրեթե լիակատար Հայս-
մավուրքների մակարդակին, այնուհետև Գր. Խլաթեցու ջանքերով լայն ժո-
ղովրդականություն ստանում և հարատևում դարեր:

«ПРАЗДНИЧНАЯ МИНЕЯ» ГРИГОРА ВКАЯСЕРА

Доктор филол. наук М. Т. АВДАЛБЕГЯН

(Резюме)

Уже в X в. в армянской средневековой литературе существовали
разные праздничные сборники, а в конце этого века Овсепом Костандпу-
полсеци был переведен греческий Синаксарь. Однако указанные сборни-
ки не отражали армянскую жизнь, полностью не соответствовали духов-
ным потребностям народа, не включали жизнеописаний выдающихся де-
ятелей и повествований о значительных культурно-политических событи-
ях Армении. В конце X — начале XI вв. Григор Вкаясер (Мартирофил)
Старший составил новую редакцию бытовавшей тогда «Праздничной
Миней». Отличительными чертами его сборника являются замена под-
вижного календаря стабильным и внесение дней праздников армянских
деятелей, событий и их поминование. На основе «Праздничной Миней»
(«Տօնամակ») Григора Вкаясера были составлены последующие редак-
ции армянского Синаксаря, имеющие определенную познавательную и
художественную ценность.

¹⁴ Ա. 8179 ձեռագրում առանձին ընթերցվածներ աչքի են զարնում լեզվի հմուտ իմացու-
թյան և հարուստ, մենք կասեինք մագիստրոսյան բառապաշարով ու ոճով, որոնք հիշեցնում են
Վկայասերի՝ նույնիսկ թարգմանություններում գործածած հրաշալի բառաբարդությունները և այլն: